


Foto's Kinaarshib

M. Hoffmann

40. 3



1914

-6 NOV 2011
87

ԿՈՎԿԱԾԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Խ 22

835

4-90

ԱՅ

ԳՐԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ


ՀԵՎԻԱԹՆԵՐԸ

Ոռուերէնից թարգմանեց


ՅՈՎԼ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՊՐԱԿ II

- 1 ԳՈՐԾԸ
- 2 ԱՆՏԱՌԻ ՏՆԱԿԲ
- 3 ԿԵՆԶԵԼՆ ՈՒ ԳՐԵՏԵԼԸ



ԹԻՖԼԻԶ
Տպարան և Աղանդեանի, Պոլից. 7.
1914



ԳՈՐԾԸ

Ժամանակով մի թագաւոր է լինում: Էս թագաւորը մի քանի աղջիկ է ունենում՝ մինը միւսից գեղեցիկ: Բայց ամենից գեղեցիկը լինում է փոքրը. Էնքան սիրուն, էնքան շարմադ, որ էլ չուտես, չը խմես, կանգնես ու մտիկ անես:

Թագաւորի պալատի կողքին մի անտառ է լինում, անտառում, մի հին լորենու տակ մի ջրհոր: Էս սիրուն աղջիկը սովորութիւն է ունենում՝ ամեն օր գնում է էն հով տեղը, ջրհորի մօտ խաղ է անում, իր ոսկի գնդակը վերև է գցում ու բռնում: Մի օր էլ խաղալիս շատ բարձր է գցում, չի կարում բռնի ու գնդակն ընկնում է ջրհորը: Վերևից մտիկ է անում—ջրհորը աչքին թւում է անտակ: Սկսում է աղի լաց լինել: Էս լացի ժամանակ յանկարծ մինը ձէն է տալիս.

—Ի՞նչ է պատահել, թագաւորի աղջիկ: Ինչի համար ես էղպէս աղի աղի լաց լինում:

Մտիկ տայ աղջիկն ինչ տեսնի. մի ահազին գորար ջրհո-

3 663-55
663-55

ըի պռունգին նստած մարդու նման խօսում է: Զարմանում է: Ասում է.

—Խաղալիս գնդակս ջրհորը գցեցի, գորտն ախպէր, նրա համար եմ լաց լինում:



—Ի՞ն, խնդում է գորտը, էդ ի՞նչ բան է, որ դրա համար լաց ես լինում: Ի՞նչ կը տամ, որ քո գնդակը հանեմ:

—Ամեն, ամեն բան կը տամ, սկսում է աղաչել աղջիկը.

իմ բոլոր զարդերը կը տամ, իմ անգին քարերը կը տամ, իմ ոսկէ թագը կը տամ, միայն թէ իմ սկրուն գնդակը հանես:

Գորտը թէ.—Ինչիս են պէտք քո զարդերը, քո անգին քարերը, մարգարիտներն ու ոսկէ թագը: Զեմ ուզում: Ա՛յ, ուրիշ բան է՝ եթէ ինձ սիրէիր, ու էնպէս սիրէիր, որ ամեն բանում քո անբաժան ընկերը լինէի, քեզ հետ միասին սեղան նստէինք, մի ամանով ուտէինք, մի բաժակով խմէինք ու մի անկողնում քնէինք: Ա՛յ, եթէ էս խոստանայիր՝ էն ժամանակ կը ցատկէի ջրհորն ու յատակից կը հանէի քո ոսկէ գնդակը:

—Լաւ, լաւ, ինչ որ ուզում ես՝ էդ ամենը խոստանում եմ, միայն թէ իմ գնդակը բերես, խօսք է տալիս թագաւորի աղջիկն ու հետն էլ մտքումն ասում է.—Սրան մտիկ տուր է, տիմար կրկուան, մի տես թէ ինչեր է ուզում: Գնա ջրհորում ճպեխուի ու կըրկոացրու. քո ի՞նչ բանն է մարդու ընկեր դառնաս...»

Գորտը հէնց որ էս խոստումը լսում է՝ սուզւում է ջրի տակը, գնդակը գցում է կանանչ խոտի մէջ: Աղջիկը վրայ է թռչում գնդակը յափշտակում, ուրախ ուրախ թռչկոտալով վազում դէպի տուն: Գորտը կանչում է.

—Կաց, կաց, ինձ էլ տար հետդ... ախար ես քեզ պէս վազել չեմ կարող...»

Աղջիկը ետ էլ չի նայում. վազում է ընկնում հօր պալատն ու գորտը մտիցը հանում: Գորտը ետեից նայում է նայում ու էլ ետ մտնում է ջրհորը:

Միւս օրը հէնց որ թագաւորի աղջիկն իր հօր ու պալատականների հետ միասին սեղան է բազմում ու սկսում է ուտել իր ոսկի ամանով, չըլըփ, չըլըփ, մինը մարմար սանդուխըներով բարձրանում է, գուռը ճանկոտում ու կանչում.

—Թագաւորի փոքրիկ աղջիկ, բաց արա...» Թագաւորի աղջիկը վագէվազ գնում է տեսնի՝ ով է կանչում իրեն: Դուռը բաց է անում տեսնում առաջին կանգնած գորտը: Իսկոյն գուռը ետ է զարկում ու վախեցած գալիս է իր տեղը նըստում:

— Եղ ի՞նչ էր, աղջիկս, ինչից եղաքս վախեցիր: Զը լինի թէ դև կայ կանգնած դռան ետեղ՝ ուզում է քեզ վախցնի, հարցնում է թագաւորը:

— Ոչ, հայրիկ, դև չի, մի անձունի գորտ է:

— Գորտն ի՞նչ է ուզում քեզնից:

— Գիտես, հայրիկ... Երէկ անտառում ջրհորի մօտ խաղ էի անում, յանկարծ իմ ոսկէ գնդակն ընկաւ ջրհորը... Ես լաց էի լինում... Գորտը հանեց ինձ տւեց իմ ոսկէ գնդակը... Եւ որովհետեւ նա զրա փոխարէն ուզում էր, որ ես անպատճառ իր խաղընկերը դառնայի, ես էլ խոստացայ... Բայց իսկի մտքովս չէր անցնում թէ՝ ճիշտ որ նա կը կարենար իր ջրհորը թողնել... Ահա հիմի եկել է, կանգնած է էնտեղ դռան ետեղ, ուզում է գայ ինձ մօտ:

Այնինչ գորտը ճանկուում է դուռն ու կանչում.

— Թագաւորի փոքը աղջիկ,

Եկ դուռը բաց դու կարգին,

Միտդ է երէկ ինչ խօսք տըւիր

Գաղ ջըրհորի եզերքին...

— Թագաւորի փոքը աղջիկ,

Եկ դուռը բաց դու կարգին...

Թագաւորն աղջկանն ասում է.

— Խօսք ես տւել—պէտք է կատարես: Գնա դուռը բաց արա:»

Աղջիկը գնում է դուռը բաց է անում: Գորտը ետեղ ներս է ցատկում, հնալ, հնալ, ցատկելով հասնում է աթոռին ու կանչում է.

— Դէ ինձ բարձրացըրու դիր քեզ մօտ:»

Աղջիկը իր մէջը շատ է նեղանում, տատամսում է, բայց թագաւորը պատկրում է, որ գորտն ինչ ասում է՝ լըսի: Աղջիկը գորտին բարձրացնում է դնում իր աթոռին: Աթոռին է դնում թէ չէ՝ հիմի էլ ուզում է սեղանը բարձրանայ: Դնում է սեղանին: Հիմի էլ ասում է մօտ քաշիր քո ոսկէ ամանը, որ միասին ուտենք. Ի՞նչ անէր խեղճ աղջիկը: Ես մի կամքն

էլ է կատարում: Ուտում է պրծնում, հիմի էլ թէ—կշտացայ, քունս տանում է, ինձ տար քո սենեակը, մետաքսէ անկողինդ շինի, որ քեզ հետ միասին քնենք: Էստեղ արդէն աղջիկն ըսկում է լաց լինել: Սառն ու լպըրծուն գորտին դիպչելուց էլ զգում էր ու զարգանդում, հիմի պէտք է տանէր իր գեղեցիկ ու մաքուր անկողնում իր հետ քնեցնէր: Զի ուզում, բայց հէրը առաջւանից աւելի է զայրանում: Ասում է՝ այժմ չպէտք է արհամարհիս նրան, ով որ փորձանքի ժամանսակ թանգ էր քեզ համար: Ինչ որ խոստացել ես—պէտք է կատարես:»

Ճարահատւած աղջիկը երկու մատով գորտի մէջքից բռնում է տանում իր ննջարանն ու գնում անկիւնում: Բայց արի տես, որ գորտը սրանից էլ չի խրատում: Աղջիկը հէնց անկողին է մտնում թէ չէ՝ ցատկելով մօտենում է յատակին կանգնում ու ճըզտալով խօսում.—Հը, էղ ի՞նչ է... ես էլ եմ յոգնած... ես էլ եմ ուզում քնեմ... ինձ էլ պառկեցրու քեզ հէտ...»

Էնակս է ասում, որ էս աղջկայ սիրտը շարժւում է, ժպտալով վերցնում է դնում իր անկողի վրայ: Դնում է իր անկողի վրայ թէ չէ, մին էլ էն է տեսնում՝ էս գորտի կաշին տրաքեց ու միջիցը դուրս եկաւ մի գեղեցիկ երիտասարդ, կողքին նստեց: Կողքին նստում է ու պատմում զարմացած աղջկանը, թէ ինքը մի թագաւորի տղայ է եղել, չար կախարդը դարձրել է գորտը, այժմ աղջիկը



իրեն հանեց ջրհորից ու վերադարձրեց իր մարդկային կերպարանքը:

Էստեղից ուրախ ուրախ վեր են կենում գնում թագաւորի մօտ, պատմում են ամեն բան: Էնպէս էլ դուք ուրախանք, ինչպէս որ թագաւորն ուրախանում է. մեծ հարսանիք է սարքում ու նրանց պսակում իրար հետ:

Հարսանիքից յետոյ նորապսակները պիտի գնային թագաւորի տղի հայրենիքը: Առաւօտը վաղ գալիս է դուանը կանգնում ութ ձիանի կառքը, ձիանքը սիպտակ ջայլամի սիպտակ բարձր փետուրները գլխներին, ողջ սարքերը ոսկեղէն, իսկ կառքի ետևը կանգնած թագաւորի տղի հին ծառանշաւատարիմ Օհանը: Ու էսպէս իր Հաւատարիմ Օհանը թիկունքին, ջահել կինը կողքին, թագաւորի տղէն սլանում է դէպի հայրենիք:

Շատ են գնում թէ քիչ, մին էլ յանկարծ ճանապարհին ականջովը մի ձէն է ընկնում, թւում թէ կառքի ետևը մի բան կոտրեց: Ետ է դառնում կանչում.

—Ի՞նչ էր, Օհան, կառքը կոտրեց:

—Ո՞չ, ոչ, իմ տէր, կառքը չէր էս.

Էս իմ սրտի կապն էր երկաթ,


որ տանջում էր ինձ անընդհատ

էն օրւանից, ինչ դու հորում

ապրում էիր գորտի օրում:

Գնում են: Ճանապարհին մի երկու անգամ էլ էդ տեսակ ձայներ է ընկնում թագաւորի տղի ականջովը ու ամեն անգամ էլ էնպէս է թւում թէ կառքը կոտրեց, բայց իսկապէս Օհանի սրտի ծանր երկաթի կապանքներն էին խորտակւում ու ընկնում: Էն օրւանից, ինչ որ իր տէրը գորտ էր դարձել՝ Հաւատարիմ Օհանը սաստիկ տխրել էր ու երեք պատ երկաթի կապով կապել էր իր սիրտը, որ տխրութիւնից չը պառէրք Այժմ էդ կառքը եկել էր, որ իր երիտասարդ տիրոջը հայրենիք տանի: Հաւատարիմ Օհանը երկուսին էլ նստեցրել

էր կառքի մէջը՝ ինքը կանգնել նրանց թիկունքին, և, տեսնելով իր երիտասարդ տիրոջը կախարդանքից ազատւած ու բախտաւոր, ուրախութիւնից սիրտը օխտը գագ բաց էր եղել ու իրար ետևից խորտակւում ընկնում էին սրտի ծանր կապանքները:



ԱՆՏԱՐԻ ՏՆԱԿԸ

Մի խոր անտառի բերանում մի խրճիթ է լինում. էս խրճիթում կընկայ ու երեք աղջիկների հետ ապրելիս է լինում մի աղքատ փայտհատ:

Մի առաւօտ, գործի գնալիս, կնկանն ասում է.—Այ կնիկ, էսօր բանս մինչև կէսօր չեմ վերջացնիլ. մեր մեծ աղջկայ հետ ինձ համար ճաշ կուղարկես անտառը: Ես չէլ հետս մի տոպրակ կորեկ կը վերցնեմ, շաղ տալով կերթամ, որ էս նշանով գայ ու ճամբէն չը կորցնի:

Ճաշ է դառնում թէ չէ՝ մեծ աղջիկը կերակուրն առնում է ճամբա ընկնում: Բայց ծտերը, արտուաները, սարեկներն ու ղեղանիկները շաղ տւած կորեկն արդէն վեր քաղած են լինում ու աղջիկը չի կարողանում հօր հետքը գտնի: Գնում է, գնում է, մինչև արել մէր է մտնում ու մութը վրայ է հաս նում անտառում: Շառերը շըշում են խաւարում, բուերը կանչում, կոընչում, ու աղջիկը սկսում է վախենալ:

Մին էլ տեսնում է հեռում, ծառերի արանքից մի կրակ է փայլիում:

—Էնտեղ երեխ մարդիկ են ապրում, գնամ նրանց մօտ մնամ էս գիշեր, մտածում է աղջիկն ու գնում էս կրակի վրայ:

Գնում է հասնում մի տնակի, դուռը ծեծում է:

—Ո՞վ ես, ներս արի, կանչում է ներսից մի ձայն:

Աղջիկը ներս է մտնում, տեսնում է հրէս նստած մի ալեռը մարդ, գլուխը կախ արած, սիպտակ միրուքը ալիքսածն

իջնում է մինչև գետին: Իսկ էս կողմը մի չալ կով, մի հաւ ու մի աքլոր:

Աղջիկը պատմում է ծերին, թէ ինչպէս է ինքը մոլորւել անտառում, ու խնդրում է, որ տեղ տայ գիշերը մնալու:

Ծերունին դիմում է իր կենդանիներին:

—Սիրուն հաւիկ, իմ լաւիկ,

Զալ ու նախշուն իմ կովիկ,

Եւ գու, աքլոր վահկան,

Ի՞նչ էք ասում դուք սըրան:

Կենդանիները միասին պատասխանում են:—Լաւ: Էս ժամանակ ծերունին աղջկանն ասում է:

—Համեցէք, մեր աչքի վրայ, սիրուն աղջիկ, մեր դուռը բաց է, տունը լիքը: Համեցէք, մօտեցիր օջաղին, կերակուր շինի մեզ համար էլ, քեզ համար էլ:

Աղջիկը մտնում է խոհանոց և ճիշտ որ ամեն բան գըտնում է առատ առատ: Մի լաւ ընթրիք է պատրաստում, բերում է ծերունու առաջ լիքը սեղան է բաց անում, ինքն էլ նրա հետ նստում, ուտում, խմում, կշտանում: Որ կշտանում է պրճնում,—բա ես յոգնած եմ, ասում է, հիմի որտեղ քը-նեմ: Էստեղ կովը, հաւն ու աքլորը պատասխանում են.

—Ողջ դրա հետ դու կերար

Ու խմեցիր, ինչ որ կար,

Մըտիկ չարիր իսկի մեզ.

Գընա, քնի ուր կուզես:

Էս ժամանակ ծերունին ասում է.

—Բարձրացի, սանդուխքի գլխին մի սենեակ կայ: Էս սենեակում երկու անկողին կայ: անկողինները պատրաստի, ես էլ կը գամ կը քնենք:

Աղջիկը վերև է բարձրանում, անկողինները գցում, ու էլ ծերունուն չի սպասում, ինքը պառկում է քնում: Մի քիչ յետոյ ծերունին գալիս է, մոմի լուսով նայում աղջկանը ու գլուխը ժաժ տալի: Գիշերւայ մի ժամանակ, երբ տեսնում է լուսութ քնած է, մահճակալի տակին մի գաղտնի դուռ է լինորը քնած է, մահճակալի տակին մի գաղտնի դուռ է լի-

նում, բաց է անում, աղջկանը թողնում ցած ու կրկին փակում:

Փայտհատը իրիկունը տուն է գալի, բարկանում է կընկայ վրայ, որ իրեն ամբողջ օրը սոված է թողել:

—Ես ինչ անեմ, պատասխանում է կինը, ճաշը տւել եմ մեր մեծ աղջկանը—ղրկել, ինչպէս երկում է, ճամբէն կորցրել է, չի գտել, ինքն էլ ետ չի եկել դեռ:

Փայտհատը միւս օրն էլ առաւտեան վաղ վեր է կենում գնում անտառը: Պատւիրում է, որ էս անգամ միջնեկ աղջիկը տանի ճաշը:

Էսօր հետս ոսպ կը վերցնեմ ասում է, որ ճամբին շաղ տամ: Ոսպը կորեկից խոշոր է, աղջիկս հեշտ կը տեսնի ու ճամբէն չի կորցնիլ:

Կէսօրին միջնեկ աղջիկը ճաշն առնում է ու ճամբա ընկնում: Գնում է, գնում: ոչ մի տեղ ոսպ չի գտնում ։ Դու մի ասիլ, դարձեալ թոշունները կերել են, մի հատ էլ չեն թողել:

Աղջիկն անտառում թափառում է, թափառում, գիշերը ընկնում էլ նոյն ծերունու մօտ, հաց ու քնելու տեղ է խընդրում: Ծերունին դիմում է կովին, հաւին ու աքլորին.

—Սիրուն հաւիկ, իմ լաւիկ,

Զալ ու նախշուն իմ կովիկ,

Եւ դու, աքլոր փահկան,

Ինչ էք ասում դուք սըրան:

—Լաւ, պատասխանում են կենդանիները: Միջնեկ քոյրն էլ մեծ քրոջ նման, ընթրիք է պատրաստում, ծերի հետ ու տում, խմում, կշտանում: կենդանիների վրայ ուշք էլ չի դարձնում: Երբ հարցնում է թէ՝ ես որտեղ պիտի քնեմ, կենդանիները պատասխանում են:

—Ողջ դրա հետ դու կերար,

Ու խըմեցիր, ինչ որ կար,

Մըտիկ չարիր իսկի մեզ,

Գընա, քնի ուր կուզես:

Հէնց նա էլ գնում է թէ չէ, ետեից գնում է ծերունին,

գլուխը թափահարում ու դարձեալ թողնում: է ներքեւ:

Երրորդ առաւտը փայտհատը կնկանն ասում է:

—Էսօր մեր փոքրիկ աղջկայ ձեռքով ղըրկի ճաշը: Նա բարի է ու ականջով: Նա ճամբէն կըգտնի, իր քոյրերի նման չի, որ դէս ու դէն ընկնի:

Մայրը չի ուզում երրորդ աղջկանն էլ անտառը ղըրկի: Լաց է լինում, ասում է—աչքիս սև ու սիպտակը սա է մնացելլ ինչու ես ուզում սրան էլ կորցնես մեծերի նման:

—Դու հանգիստ կաց, ասում փայտհատը, սա կորչի, չի, սա էնպէս խելօք է որ... ես էլ էսօր հետս սիսեռ կը տաշնեմ ճամբին շաղ տալու: Միսեռը ոսպ հօ չի, նրանով անպատճառ ճամբէն կը գտնի:

Բայց երբ աղջիկը ճաշն առած անտառն է մտնում, թըռչուններն արդէն սիսեռը կերած են լինում: Աղջիկը մնում է տարակուսած: Չի իմանում որ կողմը գնայ: Մտածում է, դարդ է անում, թէ հիմի հայրը կը սովի, մայրը լաց կը լինի... թարգիս է անում:

Ման է գալի, ման, հօրը չի գտնում: Երբ մութը ընկնում է, հեռւից տեսնում է անտառի տնակի լուսն ու գնում է էն լուսի վրայ: Մտնում է ներս, տեղ է խնդրում, ու ալեհեր ծերունին դարձեալ դիմում է իր կենդանիներին:

—Սիրուն հաւիկ, իմ լաւիկ,

Զալ ու նախշուն իմ կովիկ,

Եւ դու, աքլոր փահկան,

Ինչ էք ասում դուք սըրան:

—Լաւ... պատասխանում են կենդանիները: Էն ժամանակ աղջիկը մօտենում է, գուրգուրում հաւին ու աքլորին, կովի ճակատը քորում: Ծերի պատէրով ընթրիք է պատրաստում, դնում սեղանին ու ասում:

—Ինչու ես պէտք է ուտեմ, էս բարի կենդանիները քաղցած նայեն:

Գնում է, կուտ բերում ածում հաւի ու աքլորի առջե, կովի համար էլ մի խորոմ խոտ:

—Կերէք, ասում է, իմ սիրելիք, այ հիմի ջուր էլ կը բե-

բեմ: Գնում է մի. գոյլ ջուր էլ բերում գնում առաջները:

Ամենքին կշտացնում է, նոր ինքն է նստում ուտում, ինչ որ թողել էր ծերունին: Իսկ երբ քնելու ժամանակը դալիս է, ասում է.—Ժամանակը չի արդեօք, որ ամենքս էլ հանգստանանք:

Սիրուն հաւիկ, իմ լաւիկ,

Չալ ու նախշուն իմ կովիկ,

Եւ դու, աքլոր փահկան,

Ինչ էք ասում դուք սըրան:

—Լաւ, պատասխանում են կենդանիները.

—Մեզ հետ կերար դու միասին

Ու հոգացիր մեր մասին,

Բարի գիշեր քեզ, բարի,

Մուրազդ Աստւած կատարի:

Էստեղ աղջիկը բարձրանում է վերև, անկողինները պատրաստում: Ծերունին գալիս է քնում: Ինքն էլ միւս մահճակալին է պառկում ու քուն մտնում հանգիստ:

Գիշերւայ մի ժամանակ տունը յանկարծ դղրդում է, կարծես քանդուում ու տակնուվրայ է լինում: Աղջիկը վախեցած զարթնում է, բայց աղմուկն անցնում է, ինքն էլ քնում է նորից:

Առաւոտը աչքը բաց է անում—ի՞նչ է տեսնում: Տեսնում է պառկած մի մեծ, շքեղ զարդարած ու կահաւորւած դահլիճում, շուրջը թաւիշ ու ոսկի, հարաւային փարթամ բոյսեր ու ծաղիկներ այրուում վառւում են առաւոտեան արևի ճառագայթների տակ: Տեսնում է, բայց աչքերին չի հաւատում, ասում է՝ երազի մէջ եմ երևի: Էսպէս մտածելիս ներս են մտնում երեք ճոխ հագնւած ծառաներ, խոնարի գլուխ են տալի ու հարցնում:

—Ի՞նչ կը հրամայէք, տիրուհի:

—Լաւ, լաւ, գնացէք, պատասխանում է քնաթաթալիս աղջիկը, հիմի վեր կը կենամ, ծերունու համար կերպիուր կը պատրաստեմ, կովին, հաւին ու աքլորին կը հոգամ:

Կարծում է, թէ ծերունին էլ արդէն վեր է կացել: Նայում է նրա անկողնին, տեսնում է ծերունին չը կայ, տեղը պառկած է մի օտար ջահել ու գեղեցիկ երիտասարդ...

Եւ ահա երիտասարդը աչքերը բաց է անում ու էսպէս խօսում զարմացած աղջկայ հետ:

—Լսի, սիրուն աղջիկ: Ես էս երկրի թագաւորի որդին եմ: Չար վիուկը կախարդել էր ինձ ու դատապարտել, որ ես ծերի կերպարանքով ապրէի անտառում, ոչ ոք էլ չը լինէր ինձ հետ, բացի իմ երեք ծառաները, նրանք էլ կովի, հաւի ու աքլորի կերպարանքով: Եւ էդպէս պէտք է մնայինք, մինչև յայտնւէր էս բարի աղջիկը, էս քնքոյշ սիրուը, որ ոչ միայն մարդկանց, այլև կենդանիներին լինէր սիրող ու կարեկից...

Էս աղջիկը դու եղար:

Քու շնորհիւ էս գիշեր—կէս գիշերին, մենք ամենքս ազաւեցինք կախարդանքից ու իմ պալատը, որ գարձել էր անտառի մի հին տնակ, նորից դարձաւ առաջւան պալատը:

Ու կանչում է թագաւորազնը իր ծառաներին, որ գնան աղջկայ ծնողներին բերեն հարսանիքին:

—Բայց ժրտեղ են իմ քոյրերը, հարցնում է աղջիկը:

—Նրանց ես փակել եմ ներքայարկում, պատասխանում է երիտասարդը: Եգուց կուղարկեմ անտառը, էստեղ ածխացարի մօտ ծառայեն ու էնքան ման, մինչև որ դառնան բարի մօտ ծառայեն ու էնքան մտածել կենդանիների մասին:



ՀԵՆԶԵԼՆ ՈՒ ԳՐԵՏԵԼԸ

Մի մեծ ան-
տառի բերանում
աղըում էին մի
աղքատ փայտա-
հատ ու իր կինը:

Երկու երեխայ ունէին, տղի անունը չենզել էր, աղջկանը՝ Գրետել:

Առանց էն էլ պակասութեան մէջ են լինում, թանգութիւնն էլ որ ընկնում է էն կողմերում, իրենց օրւայ հացն էլ չեն կարողանում ճարեն: Մի օր էլ, տեղումը պառկած փայ-
տահատը դէս է մտածում, դէն է մտածում, դարդից մի կող-
քից միւս կողքի վրայ է շուռ ու մուռ դալիս, վերջը կնոջն
ասում է.

— Էս ինչպէս պէտք է անենք, այ կնիկ. իսկի բան չու-
նենք, ինչնվ պիտի պահենք էս երեխաներին:

— Գիտես, այ մարդ, պատասխանում է կինը, արի առա-
ւոտը ծէքին երեխաներին տանենք անտառի խորքը, կրակ ա-
նենք, մի-մի կտոր հաց տանք ձեռներն ու էնաեղ թողնենք,
մենք ետ գանք մեր գործին: Ճամբէն չեն գտնիլ, որ ետ գան
տուն ու մենք էլ կազառւենք:

— Զէ, այ կնիկ, պատասխանում է փայտահատը, ես էդ-
պէս բան չեմ անիլ, իմ սիրու չի տանիլ, որ ես իմ ձեռքով
իմ երեխաներին տանեմ մենակ թողնեմ անտառում, վերջա-

պէս գաղանները կը յարձակւեն ու կը պատառուտեն նրանց:
— Բ'հ, յիմար, ասում է կինը, էսպէս թէ էնպէս չորսս
էլ սովամահ կորչելու ենք, էն ժամանակ գնա ու դագաղների
համար տախտակ տաշի... Ու հանգիստ չի տալի մարդուն, մին-
չև որ չի համաձայնում իրեն հետ:

— Բայց էլի մեղքս գալիս է խեղճ երեխաների վրայ, ա-
սում է փայտահատը, կնոջ հետ համաձայնւելուց յետոյ: Իսկ
երեխաների քունը սովից չի տանում, լսում են ամեն բան,
ինչ որ խորթ մէրը ասում է իրենց հօրը:

Աղի-աղի լաց է լինում Գրետելը ու դառնում չենզելին՝
— Մենք կորանք, չենզել:

— Սնաւ կաց, Գրետել ջան, ասում է չենզելը, դարդ մի
անիլ. ես սրա ճարը գիտեմ:

Եւ ահա մեծերը քնում են թէ չէ, չենզելը վեր է կե-
նում, իր շորերը հագնում, դուռը բաց է անում ու ծլկում
փողոց: Լուսինը պայծառ լուսաւորում էր ու իրենց տան առ-
ջել ցրւած սիպտակ լափուկները արծաթի փողի նման շող-
շողում էին: Չենզելը կռանում է, ու գրպանն ինչքան տա-
նում է, էդ քարերով լցնում է: Յետոյ վերադառնում է տուն:
Գրետելին ասում:

— Հանգիստ կաց, քոյրիկ ջան: Քնիր, Աստւած մեղ չի
կորցնիլ: Ու նորից պառկում է իր անկողնում:

Առաւօտը ծէքում է թէ չէ, արևածագից առաջ, խորթ
մէրը գալիս է երեխաներին զարթեցնում:

— Դէ, շուտ արէք, վեր կացէք, ծոյլեր, պատրաստեցէք
գնանք անտառ փէտ բերելու: Յետոյ ամեն մէկին մի-մի կտոր
հաց է տալիս ու պատիրում:

— Ահա էս ձեզ տալիս եմ ճաշի համար, տեսէք, մինչև
ճաշը չ'ուտէք, թէ չէ միկնոյն է, յետոյ էլ ոչինչ չէք ստա-
նալու:

Գրետելը հացը գնում է գրպանը, որովհետեւ չենզելի
գրպանները բերնէ բերան լիքն էին քարերով: Յետոյ վեր են
կենում ու ճանապարհ են ընկնում դէպի անտառը:

Մի քիչ որ անց են կենում, Հենգելը կանգ է առնում ու նայում է ետ՝ դէպի իրենց խրճիթը, ու շարունակ էղպէս ետ է մնում: Հէրն ասում է:

— Հենգել, ինչ ես դու շարունակ ետ մտիկ տալիս ու ետ մնում, յօրանջելու ժամանակ չի, ոտներդ ժաժ տուր:

— Հայրիկ, ես մեր սիպտակ կատւին եմ մտիկ տալիս, այ, էնտեղ կտերը նստել է, կարծես թէ մեզ վերջին «մնաս բարով» է ասում: Խորթ մէրը էստեղ խօսքը կտրում է.— Ապուշ, իսկի էլ էն մեր կատուն չի, էն կտուրի վրի սիպտակ ծխնելոյզն է, որ փայլում է արևի տակ: Իսկ Հենգելը կտուրի վրայ նայելու մասին իսկի չէր էլ մտածում, նա ետ ընկնելով իր գրպանի սիպտակ քարերն էր ցանում ճամբին:

Հէնց որ հասնում են անտառի խորքը՝ հէրն ասում է.

— Դէ, երեխէք, փէտ հաւաքեցէք, ձեզ համար կը առ անեմ, որ չը մըսէք: Զեռաց Հենգելն ու Գրետելը ջախ են հաւաքում բերում կիտում: Զախը վառում են, բոցը վեր է բարձրանում: Խորթ մէրը ասում է.

— Դէ երեխէք, դուք կը առ կի կողքին պառկեցէք, ու հանհանգստացէք, իսկ մենք զնանք մի քիչ հեռու փէտ անենք, պրծնենք թէ չէ, կը գանք ձեզ էլ կը վերցնենք, միասին կը զնանք տուն:

Հենգելն ու Գրետելը կը առ կողքին նստում են, ճաշելու ժամանակն էլ որ գալիս է, ամենքն իրենց հացի կտորն ուտում են: Եւ որովհետեւ կացնի ձէն էին լսում, հաւաքացած էին, որ իրենց հէրը մօտիկ մի որ և իցէ տեղ է: Բայց որ թրխկացնում էր, էն կացինը չէր, մի կոճղ էր, որ փայտահատը կապել էր մի չոր ծառի, քամուց, զնում էր գալիս, զարկում ծառի բնին ու թրխկացնում: Ու էսպէս, երեխէքը երկար-երկար նստում են, աչքները յոգնածութիւնից փակւում են իրանց իրանց ու խորը քնում են:

Մին էլ վեր են կենում, տեսնում են արդէն մութ գիշեր է:

— Ոնց պէտք է էս անտառից դուրս գանք, Հենգել:

Հենգելը սիրտ է տալի:

— Մի քիչ կաց, հրէս լուսնեակը դուրս կը դայ՝ ճանապարհը կը գտնենք:

Հէնց որ լուսինը դուրս է գալիս, Հենգելը քրոջ ձեռքը բռնում է ու գնում իր ցանած քարերով, որոնք արծաթի փողերի նման պսպղում էին ու ցոյց տալիս ճանապարհը:

Ամբողջ գիշերը էսպէս մինչեւ լոյս գնում են ու լուսաբացին հասնում են իրենց տունը: Դուռը ծեծում են. խորթ մէրը բաց է անում, ու թէկ շատ է զարմանում, որ տեսնում է Հենգելն ու Գրետելն են, բայց ասում է.

— Այ, դուք չար երեխէք, էսքան ժամանակ ինչ էք անտառում քնել ու մնացել, մենք էլ կարծում էինք էլ չէք ուզում մեզ մօտ վերադառնաք:

Իսկ հէրն ուրախանում է, որովհետեւ նրա սիրտը ցաւում էր, որ իր երեխաներին մենակ անտառում էր թողել:

Մի քիչ ժամանակ անց կենալուց ետք, նորից սովէ ընկնում ամեն տեղ, ու նորից երեխաները լսում են, թէ ինչպէս իրենց խորթ մէրը գիշերը հօրն ասում է.

— Էլ ետ ինչ ունէինք չունէինք կերանք: Մենակ մի կէս հաց է մնացել, էն էլ որ կերանք՝ մեր բանը պրծած է: Պէտք է էս երեխանցը հեսացնենք: Տանենք անտառն, էս անգամ աւելի խորը, որ էլ չկարողանան ճամփա գտնեն ու ետ գան, թէ չէ էլ մեզ փրկութիւն չկայ:

Էս բանը քարի նման ճնշում է հօր սիրտը, ու միտք է անում:

— Աւելի լաւ է էն մնացած վերջին պատառն էլ բաժանի իր երեխաների հետ:

Բայց ինչ որ ասում է՝ կինը ոչ մի բան չի ուզում լսի. հէնց մի գլուխ հայնոյում է ու նախատում: Դէ ով որ այբնասել է, բենն էլ պէտք է ասի: Փայտահագն էլ, որ մի անգամ արդէն կնոջ հետ համաձայնել էր, երկրորդ անգամ էլ պէտք է համաձայնէր:

Իսկերեխաները դումի ասիլ քնած չեն, ու էս բոլորը լսում են: Մեծերը քնում են թէ չէ, չենզելը տեղից վեր է կենում, ուզում է առաջւայ նման էլի դուրս գնայ ու պաշարի համար գրպանը լափուկներով լցնի, խռըթ մէրը դուռը վակած է լինում, չի կարողանում դուրս գնայ, բայց էլի քրոջն ամեն կերպ սիրտ է տալիս:

— Լաց մի լինիր, Գրետել ջան, դու հանգիստ քնիր քեզ համար: Աստւած ողորմած է, մեզ չի կորցնիլ:

Առաւոտը ծէքին խորթ մէրը գալիս է տեղներիցը վեր կացնում: Ամեն մէկին մի կտոր հաց է տալիս, հացի կտորն էլ առաջւայ տւածիցն աւելի փոքր: Եւ ահա անտառը գնալիս ճամփին չենզելը գրպանում շարունակ մանրում էիր հացի կտորը, շուտ-շուտ ետ մնում ու ցանում ետևներից: Հէրն ասում է.

— Չենզել, դու քանի կանգնես ու չորս կողմի վրայ յօր անջես. ճամփէդ գնա էլի:

— Հայրիկ, ես իմ ձերմակ աղաւնուն եմ մտիկ տալիս, որ հրէն հա մեր տանիքին նստած՝ կարծես թէ ինձ բարեւ է զրկում:

— Յիմար, կանչում է մէրը, էն իսկի էլ քո աղաւնին չի, էն սիպտակ ծխնելոյզն է արեի տակ սիպտակին տալիս:

Իսկ չենզելն էդ ժամանակ հացի փշանքները հէնց ձգում է ու ձգում իրենց ճամփին:

Երեխաներին տանում են անտառն, էնպէս մի խորը տեղ, որ իրենց օրում չէին եղած. Էնտեղ էլ կրակ են անում ու խորթ մէրն ասում է.

— Երեխէք, դուք էստեղ նստեցէք, ու, թէ քուններդ կը տանի, քնեցէք. Իսկ մենք մի քիչ աւելի խորը գնանք, փէտ հաւաքենք, յետոյ իրիկունը երբ որ գործներս կը վերջացընենք, կը գանք ձեզ էլ կառնենք ու կերթանք տուն:

Ճաշի ժամանակը որ հասնում է Գրետելը իր հացի կը-տորը բաժանում է չենզելի հետ, որովհետև չենզելն իր հացը ճանապարհին փշել էր: Յետոյ ննջում են. իրիկունն էլ վրայ է հասնում, բայց ոչ ոք չի գալիս խեղճ երեխաների հտեկ:

Զարթնում են կէս գիշերին: Հենզելը սկսում է սիրտ տալ իր քըոջս:

— Գրետել ջան, սպասիր մինչև լուսինը դուրս գայ, էն ժամանակ կ'երեան հացի փշանքները, որ ես ճամփին շաղ եմ տւել. նրանցով կգտնենք մեր ճամփէն ու կը գնանք տուն:

Լուսինը դուրս է գալիս թէ չէ, երեխէքը ճամփա են ընկնում ետ դէպի տուն, բայց ոչ մի փշանք չեն գտնում, որովհետև դաշտերի ու անտառների հազարաւոր թռչունները վեր էին քաղել: Իսկ չենզելը շարունակ Գրետելին ասում է.

— Ինչպէս որ լինի՝ մենք կը գտնենք ճանապարհը....»


Բայց ճանապարհ գտնել չեն կարողանում: Թափառում են գիշերը մինչև լուս, յետոյ ամբողջ օրը առաւօտից մինչև իրի-գիշերը մինչև լուս, յետոյ ամբողջ օրը անտառից դուրս գան. Կուն, ոչ մի կերպ չեն կարողանում անտառից դուրս գան. Կուն, ոչ մի կերպ չեն կարողին, որ էստեղ էնտեղ կարմրին հենում, բացի մի քանի մորին, որ էստեղ էնտեղ կարմրին էին տալիս խոտերում, վերջապէս, երբոր էնքան յոգնում են, էին տալիս խոտերում, վերջապէս, երբոր էնքան յոգնում են, մի ծառի տակի որ երկուսի ոտներն էլ թմրում են, մի ծառի տակի պառկում են, քնում: Բացւում է երրորդ օրւայ առաւօտը, ինչ որ երեխէքը թողել էին իրենց հօրական տունը: Նորից ինչ որ երեխէքը թողել էին իրենց հօրական տունը:

Կէսօրին աեմնում են մի ծառի ճիւղին մի սիպտակ սիպտակ սիրու թռչուն: Էս սիպտակ սիրու թռչունը էնպէս լաւ է երրուն թռչուն: Էս սիպտակ սիրու թռչունը էնպէս լաւ է երեխէքն ակամայից մարում են տեղներն ու ականջ գում, որ երեխէքն ակամայից մարում են տեղներն ու ականջ գում նրան: Լուսում է թէ չէ, թէին է անում, երեխանց են դնում նրան: Լուսում է թէ չէ, թէին է անում, երեխանց են դնում նստում միւս ծառին; Երեխաներն էլ նրա եկողքից թռչում նստում միւս ծառին; Մինչև որ հասնում են մի տեկից էսպէս գնում են, մինչև որ հասնում են մի տեկից էսպէս գնում են, մինչև որ հասնում են մի տեկից էսպէս գնում են:

հացից է շինած, կտուրը գաթից, իսկ լուսամուտները թափանցիկ շաքարից:

—Ա՞հա, հէնց սրանից էլ կսկսենք, ասում է Հենզելը. մի լաւ քէֆ անենք: Ես տանիքից մի կտոր կուտեմ, դու էլ լուսամուտից կեր, Գրետել, ով գիտի ինչ անուշ է, չէ:

Ու Հենզելը ձգւում է դէպի վերի, տանիքից մի փոքրիկ կտոր է կտրում, Գրետելն էլ կոանում է, սկսում է լուսամուտի ապակին ուտել, հէնց էս ժամանակ, ներսից մի բարակ ձէն է գալիս.



—Կը՛րծ, կը՛րծ, կը՛րծ, խը՛զ, խը՛զ, խը՛զ,
Էս ով է կըրծում տունըս:»

Երեխէքը պատասխանում են:

—Էս քամին է անում խիստ,

Զարաճըն անհանգիստ:

Ու առանց սրանից շփոթւելու շարունակում են ուտել:
Հենզելին տանիքն էնքան դուր էր եկել, որ մեծ կտոր կտրեց

իսկ Գրետելը լուսամուտից հանեց մի ամբողջ ապակի, տեղն ու տեղը նստեց ու անուշ անուշ ուտում էր:

Մին էլ յանկարծ դռները ետ են բացւում, ու իր գաւազանին յենւած դուրս է գալիս մի պառաւ-պառաւ զնիկ: Հենզելին ու Գրետելը էնքան են վախենում, էնքան են վախենում որ պատառները ձեռներիցը վեր են գցում: Իսկ պառաւը գըլումը շարժելով առաջ է գալիս.

—Վ՛ույ, երեխէք ջան, էդ ով բերեց ձեղ էստեղ: Ներս եկէք, եկէք ինձ մօտ կացէք, մի վախենաք ոչ մէկիդ վսաս չեմ տալ:»

Ասում է թաթներիցը բռնում ու ներս տանում: Տանում է լաւ նախաճաշ է տալիս. էլ կաթը, էլ շաքարահաց, էլ խընձորը, էլ ընկուզ: Յետոյ երկու տեղ է գցում մաքուր, ճերմակ: Հենզելին ու Գրետելը որ պառկում են՝ էնպէս է թւում թէ դրախտն ընկան:

Դու մի ասիլ պառաւն էսպէս բարի փաղաքուշ է ձեանում, բայց իսկապէս մի չար կախարդ է եղել, ամեն կերպ հետևում է երեխաներին և դիտմամբ էլ առնը հացից է շինել որ նրանց հեշտ գրաւի դէպի իրեն: Ով ճանկն է ընկնում, սպանում է, եփում, լափում, էդ նրա համար մի ուրախութիւն է:

Կախարդների աչքերը սովորաբար կարմիր են լինում ու հեռու չեն տեսնում, բայց զարմանալի սուր հոտառութիւն են ունենում, ճիշտ գիշատիչ գազանների պէս: Անց կենող մարդու հոտը հեռուից են իմանում: Երբ որ Հենզելին ու Գրետելը նրա տնակի մօտերքը թափառելիս են լինում, նա հեռվից արդէն նրանց հոտն առնում է, չարախնդաց ծիծաղում ու վոչում:

—Է՛ սրանք արդէն ճանկումս են... սրանք էլ ինձանից չեն պրծնիլ...

Առաւօտը ծէքին, երեխաներից առաջ, չար կախարդը մի շուտով տեղիցը վեր է թռչում ու երբ տեսնում է նրանց էն-

պէս խաղաղ քնած, լիքը, վարթադոյն թշերով, իրեն իրեն
մըմոռում է.

—Ուխայ, ինչ անուշ պատառներ են...»

Հենգելին բռնում է իր ոսկրոտ ձեռներով, քարշ է տա-
լիս տանում հաւանոցը զցում, վանդակաւոր դուռը փակում,



ու թողնում էնտեղ գոռայ, ինչքան սիրտը կուղի: Ինչքան էլ
գոռայ՝ էլ ի՞նչ պէտք է անի: Յետոյ գնում է Գրետելի ետե-
ւից, հրում է ու ճղճում.

—Դէ. շնոր, վեր կաց, ծայլ աղջիկ, Գնա ջուր բեր, եղ-
բօրդ համար մի որևէ համով բան եփիր:

Հրէն հաւանոցում փակել եմ, պէտք է նրան կերակրել որ մի
լաւ չաղանայ ինձ համար... Պէտք է չաղանայ—որ ուտեմ...

Գրետելն ուզում է լաց լինի, բայց էդ բոլորը զուր էին.
մնում է սուս ու փուս պառաւի հրամանները կատարել: Ու
սկսում են Հենգելի համար համով կերակուրներ եփել, իսկ
իրեն, Գրետելին բացի չոր սոկորներից բան չէր տալիս:

Ամեն առաւօտ պառաւը գնում է հաւանոցի դուռը կըտ-
րում ու կանչում.

—Հենգել, մատդ դէսը մեկնիր, տեսնեմ չաղացել ես
թէ չէ:

Հենգելը մատի տեղակ միշտ մի ոսկոր է դուրս մեկնում,
պառաւն էլ որ լաւ չի տեսնում, չի կարողանում ջոկի, մտա-
ծում է, որ էս Հենգելի մատն է ու զարմանում է թէ ինչպէս
է, որ Հենգելն իսկի չի չաղանում:

Էսպէս չորս շաբաթը անց է կենում, Հենգելը էլի մնում
է նիհար. պառաւի համբերութիւնը հատնում է ու էլ չի ու-
զում սպասի:

—Դէ, հայդէ, Գրետել, գնա ջուր բեր. չաղ լինի թէ նի-
հար, միենոյն է, էգուց Հենգելին մորթելու եմ, եփեմ ուտեմ:

Ինչքան է դարդ անում խեղճ Գրետելը, ինչքան է դարդ
անում ջուր բերելիս, արտասուքը էն ջրի նման աչքիցը թափ-
ում է:

—Ողորմած Աստած, դու մեզ օգնութեան համնես, կան-
չում է նա: Երանի թէ անտառումը մեզ գաղանները պատա-
ռուեին, գոնէ ես ու Հենգելը միասին կը լինէինք:

—Ջուր սիրտդ մի մաշիր, ասում է պառաւը, միենոյն է
էլ ոչ մի բան չի օգնի:

Առաւօտը վաղ Գրետելը պէտք է վեր կենար, պղինձը
կրակին դնէր, ջրով լցնէր ու տակին կրակ անէր:

—Ամենից առաջ դեռ մի թխւածք անենք, ես արդէն
փուռը վառել եմ ու խմորը հունցել:

Ասում է պառաւն ու տանում է խեղճ Գրետելին փուան
առաջը կանգնեցնում, հրում է դէպի բոցավառ փուան բերանը:

—Մալիր, ասում է, զնա տես, փետերը լմւ են դարսած, լմւ են էրւում, խմորը գնդելու ժամանակն է՝ թէ չէ:

Ուզում է Գրետելը կռանայ թէ չէ՝ բոթի զցի փուռը, ծածկոցը դնի, որ Գրետելը փոնումը խորովւի, յետոյ հանի ուտի: Բայց Գրետելը գիխի է ընկնում՝ թէ պառաւի մտքումը ինչ կայ, ասում է.

—Ես չեմ իմանում ինչպէս անեմ, որ մտնեմ մէջը..»

—Յիմար անասուն, բարկանում է պառաւը, չես տեսնում ահագին փոան բերանը. ընը, մտիկ արա, քիչ է մնում ես էլ մտնեմ մէջը..»

Ու ճիշտ որ, տմբտմբալով մօտենում է փոանը, մինչեանգամ գլուխն էլ փոան բերնից ներս է՝ կոխում: Էստեղ Գրետելը յանկարծ ետեկից էնպէս է ներս բոթում պառաւին, որ ընկնում է փոան մէջը, իսկոյն ետեկիցը ծածկոցը ամուր դընում է ու փակիչը ետեկից զցում:

Պառաւը ոռնում է, ոնց է ոռնում... Բայց Գրետելը ետ է վազում, ու անխիղճ վհուկն էնպէս էլ էրւում է պըծնում:

Գրետելը իսկոյն վազում է Հենգելի մօտ, հաւանոցի դուռը բաց է անում ու աղաղակում:

—Հենգել, Հենգել, մենք ազատւեցինք, չար պառաւը կործանւեց...»

Դուռը բացւում է թէ չէ, թոչունի նման, որ վանդակում վակւած կը լինի ու դուռը բաց կանեն, Հենգելը դուրս է թոչում: Ո՞նց են ուրախանում երկուսով, ո՞նց են ուրախանում... իրար ճտով են ընկնում, թոչկոտում են, համբուրւում են, և որովհետեւ ոչ ոքից վախ չունէին, գնում են մըտնում պառաւի տնակը, իսկ պառաւի տնակի բոլոր անկիւններում դարսւած են լինում մարգարտով ու անգին քարով լիքը մնդուկները:

—Ես մեր դռան լափուկներից հօ աւելի լաւն են, ասում է Հենգելն ու գրանները ինչքան որ կը տանէին՝ լցնում է, իսկ Գրետելն ասում է.

—Ես էլ եմ ուզում մի բան տանեմ տուն, ու նա էլ գոզնոցն է լցնում պանգէ պոռւնգ:

—Իէ հիմի գնանք հեռանանք էստեղից, ասում է Հենգելը: Քանի լուս է՝ պէտք է դուրս գանք էս կախարդւած անտպոից...

Մի քիչ որ ձանապարհ են կտրում — համսում են մի գետակի:

—Մենք ինչպէս անցնենք էս գետն, ասում է Հենգելը: Ոչ անց ունի, ոչ կամուրջ:

—Գոնէ մի նաւակ էլ չը կայ, վրայ է բերում Գրետելը: Ահա մի սպիտակ բաղիկ է լողում. արի ինդրեմ, գուցէ մեզ օգնի անց կացնի...» ու կանչում է.

Բաղիկ, բաղիկ, սիրուն բաղիկ,

Լող տուր դէպ մեզ, արի մօտիկ.

Շւարել ենք Հենգելն ու ես,

Առ քո մէջքին, անց կացրու մեզ:

Բաղիկը մօտենում է ափին, Հենգելը նստում է բաղիկի մէջքին ու քրոջը կանչում է, որ նա էլ գայ գաւակին նստի:



—Չէ, պատասխանում է Գրետելը, բաղիկը չի կարող երկուսիս էլ միասին տանի, ծանր կը լինի: Զոկ ջոկ կը տանի:

իդպէս էլ անում է բարի թոչունը:


Զուրը որ անց են կենում ու մի քիչ ձանապարհ են գընում, անտառը հետզհետէ ծանօթ է թւում, ու, վերջապէս,

*Ն 830
Մ 110
38*
նկատում են իրենց հօրական տունը։ Էստեղ սկսում են վա-
զել ինչքան ոտներումը ուժ ունէին, ներս են թափուում ու
ընկնում են իրենց հօր վզով։

Հէրներն էլ մի հանգիստ ժամ չէր ունեցել էն օրւանից,
ինչ երեխանցը թողել էր անտառում, իսկ խորթ մէրը արդէն
մեռել էր։

Գրետելը իր գոգնոցը բաց է թողնում ու միջի եղածը
հօր առաջին շուռ տալիս, էնպէս որ մարդարիտնելը ու ան-
գին քարերը շաղ են անցնում տանովը մին, իսկ միւս կողմից
էլ չենցելն է բուռնէ բուռը հանում ու թափում իր գրավանից։

Էստեղ էլ ամեն ցաւ ու հոգս վերջանում են ու ապրում
են միասին ուրախ ու անհոգ...



1276